ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.04.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-19/13 բողոքը քննող հանձնաժողով

ԳԲԽ-19/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 25.03.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-19/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն կոնսորցիումով մասնակցել են ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց

ընթացակարգին, որի արդյունքում կազմակերպությունները ճանաչվել են ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցնող:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետներում Կազմակերպություններին առաջարկվել է 5 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

«Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են նշված փաստաթղթերը, որի արդյունքում պարզվել է, որ որոշ փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և գնահատող հանձնաժողովն առաջարկել է 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված որակավորման փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունները:

Կազմակերպությունների կողմից հաջորդ օրը շտկվել և գնահատող հանձնաժողովին է ուղարկվել նշված փաստաթղթերը, որից հետո գնահատող հանձնաժողովն անհիմն կերպով մերժել է Կազմակերպությունների հայտը՝ պատճառաբանելով, որ բացակայում էր «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների մասին հայտարարությանը /հրավերի հավելված 2.3/ կցվող փաստաթղթերը /վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիքը/, մինչդեռ «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է նշված փաստաթուղթը:

Սակայն «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն բանավոր կերպով տեղեկացել է, որ հանձնաժողովը հայտը մերժել է այն պատճառով, որ ներկայացված վարկային պայմանագիրը հանձնաժողովի կողմից չի համարվել պահանջվող վարկային գծի պայմանագիր:

«Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն գտնում է, որ «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերով սահմանված պահանջներին և գնահատող հանձնաժողովի կողմից Կազմակերպությունների կողմից ներկայացված հայտը մերժելն իրավաչափ չէ, քանի որ բանկի կողմից տրված տեղեկանքի համաձայն, ներկայացված վարկային պայմանագիրը (օվերդրաֆտը) համարվում է վարկային գիծ:

«Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով և ՀՀ

կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 83-րդ կետով սահմանված պահանջները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. <u>ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 04.04.2013թ. N 04/032-542 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 25.03.2013թ. «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն 13.04.2013թ. N ՀՍ/1-321-13 գրությամբ «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի գ. Մաստարայի միջնակարգ դպրոցի (երկրորդ մասնաշենք) հիմնանորոգման աշխատանքների գնման նպատակով հայտարարված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով գնման բաց ընթացակարգին հայտ են ներկայացրել «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Գնահատող հանձնաժողովի որոշումով վերոհիշյալ կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, սահմանված ժամկետում Հանձնաժողովին է ներկայացրել իր՝ Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են որոշակի անհամապատասխանություններ, ինչի մասին «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ին և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին ներկայացվել է ծանուցում հետևյալ տեսքով.

«ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» գնման գործընթացի հրավերով սահմանված որակավորման պահանջներին նրանց համապատասխանելու մասին ներկայացրած փաստաթղթերում գնման գործընթացի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ առկա են անհամապատասխանություններ մասնավորապես՝

1. Ամբողջական չեն նախկինում կատարած պայմանագրերի և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների փաստաթղթերի փաթեթը,

2. Բացակայում են «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը՝ կցվող փաստաթղթերով, համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակիցներից յուրաքանչյուրի ստանձնած պարտավորությունների չափի մասին փաստաթղթերը:

3. Ներկայացված ոչ բոլոր փաստաթղթերն են ստորագրված և կնքված համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հանդես եկող մասնակիցների կողմից:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 75-րդ կետի պահանջը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն առաջարկում է «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ին և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին նույն ծանուցումն ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունները:»:

Սահմանված ժամկետում վերոհիշյալ կոնսորցիումի կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերով չեն ամբողջացվել նախկինում կատարած պայմանագրերի և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների փաստաթղթերի փաթեթը:

Որպես «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող փաստաթուղթ ներկայացվել է «Յունիբանկ» ՓԲԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի միջև կնքված Վարկային Պայմանագիր. ինչը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել որպես հրավերով պահանջվող վարկային գծի մասին պայմանագիր:

Գնահատող հանձնաժողովի կողմից հայտի ամբողջական գնահատման արդյունքում ներկայացված հայտը գնահատվել է «անբավարար» և մերժվել: Հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Հետագայում պարզվել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանով կասեցվել են «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով հայտարարված գնման գործընթացի «բավարար» գնահատված բոլոր մասնակիցների ներառյալ «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հրավերով պահանջվող քաղաքաշինական բնագավառի շինարարություն իրականացնող լիցենզիաները:

Հիմք ընդունելով լիցենզիաների կասեցման փաստը՝ «բավարար» գնահատված մասնակիցներից ոչ մեկի հետ հնարավոր չէ կնքել պետական գնման պայմանագիր:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, /պայմանագիր չի կնքվում/ ՀՀ Արագածոտնի մարզի գ. Մաստարայի միջն. դպրոցի երկրորդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների գնման նպատակով հայտարարված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

3. ԳԲԽ-19/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 25.03.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

4. <u>ԳԲԽ-19/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-19/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 25.03.2013թ. ներկայացված բողոքը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով էլեկտրոնային ձևով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով էլեկտրոնային ձևով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև գնահատող հանձնաժողով) կողմից «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ին ուղարկված էլեկտրոնային ծանուցումները, «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով էլեկտրոնային ձևով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից հայտով որպես ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող փաստաթուղթ ներկայացված հայտարարությունը և նույն հայտարարությանը կից «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի և «Յունիբանկ» ՓԲԸ-ի միջև 25.01.2013թ. կնքված N 004-038/ԲՕ վարկային պայմանագիրը, «Յունիբանկ» ՓԲԸ-ի 21.03.2013թ. N 231 գրությունը, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 13.04.2013թ. Կենտրոնին հասցեագրված N ՀՍ/1-321-13 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն ՀՀ Արագածոտնի մարզի գ. Մաստարայի միջնակարգ դպրոցի (երկրորդ մասնաշենք) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով էլեկտրոնային ձևով բաց ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հայտ են ներկայացրել «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն:

Բողոքաբեր ընկերությունը Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն կոնսորցիումով մասնակցել են ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգին, որի արդյունքում կազմակերպությունները ճանաչվել են ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցնող մասնակից և հրավերով սահմանված ժամկետներում

ընկերություններին առաջարկվել է 5 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Ընկերությունների կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, որի արդյունքում պարզվել է, որ որոշ փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և գնահատող հանձնաժողովն առաջարկել է 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված որակավորման փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունները: Ընկերությունների կողմից հաջորդ օրը շտկվել և գնահատող հանձնաժողովին են ուղարկվել նշված փաստաթղթերը, որից հետո գնահատող հանձնաժողովն անհիմն կերպով մերժել է Կազմակերպությունների հայտը՝ պատճառաբանելով, որ բացակայում էին «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների մասին հայտարարությանը /հրավերի հավելված 2.3/ կցվող փաստաթղթերը /վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիքը/, մինչդեռ «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է նշված փաստաթուղթը: Սակայն «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ն բանավոր կերպով տեղեկացել է, որ գնահատող հանձնաժողովը հայտը մերժել է այն պատճառով, որ ներկայացված վարկային պայմանագիրը հանձնաժողովի կողմից չի համարվել պահանջվող վարկային գծի պայմանագիր:

«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն Կենտրոնին հասցեագրված 13.04.2013թ. N ՀՍ/1-321-13 գրությամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի և «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են որոշակի անհամապատասխանություններ, ինչի մասին Պատվիրատուն «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ին և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին ներկայացրել է ծանուցում՝ հայտնելով, որ «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» գնման գործընթացի հրավերով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանելու մասին ներկայացված փաստաթղթերում գնման գործընթացի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ առկա են անհամապատասխաություններ, մասնավորապես՝

1. Ամբողջական չեն նախկինում կատարած պայմանագրերի և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների փաստաթղթերի փաթեթը

2. Բացակայում են «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև կնքվելիք պայմանագրի

կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը՝ կցվող փաստաթղթերով, համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակիցներից յուրաքանչյուրի ստանձնած պարտավորությունների չափի մասին փաստաթղթերը:

3. Ներկայացված ոչ բոլոր փաստաթղթերն են ստորագրված և կնքված համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հանդես եկող մասնակիցների կողմից:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 75-րդ կետի պահանջը նշված ծանուցմամբ Պատվիրատուն բողոքաբեր ընկերությանն առաջարկել է «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ին և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին նույն ծանուցումն ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունները:

Կենտրոնին հասցեագրված գրությամբ Պատվիրատուն հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերով չեն ամբողջացվել նախկինում կատարած պայմանագրերի և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների փաստաթղթերի փաթեթը և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող փաստաթուղթ ներկայացվել է «Յունիբանկ» ՓԲԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի միջև կնքված վարկային պայմանագիր, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել որպես հրավերով պահանջվող վարկային գծի մասին պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 83-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիք: Ընդ որում, վարկային գծի կամ երաշխիքի չափը չպետք է պակաս լինի մասնակցի գնային առաջարկի տասը տոկոսից, իսկ գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից՝ բացառությամբ պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի:

2. մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 75-րդ կետի համաձայն՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1. շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար,

2. չշտկվելու դեպքում, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով ներկայացրած հայտով՝ N 2.3 հավելվածով ներկայացրել է ֆինանսական միջոցների մասին

տեղեկանք, որով հայտնել է, որ ընկերության վարկային գծի չափը կազմում է 7.500.000 ՀՀ դրամ:

Պատվիրատուն դիմել է «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ բացակայում է «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների առկայությունը հավաստող փաստաթուղթը և առաջարկել Կարգի 75-րդ կետին համապատասխան շտկել նշված անհամապատասխանությունը:

«Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն, սահմանված ժամկետում Պատվիրատուին է ներկայացրել «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի և «Յունիբանկ» ՓԲԸ-ի միջև 25.01.2013թ. կնքված N 004-038/ԲՕ վարկային պայմանագիրը:

«Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի և «Յունիբանկ» ՓԲԸ-ի միջև 25.01.2013թ. կնքված N 004-038/ԲՕ վարկային պայմանագրի 1.1 կետի համաձայն բանկը վարկառուին է տրամադրում 7.500.000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի օվերդրաֆտ (վարկ), իսկ պայմանագրի 1.2 կետի համաձայն ժամկետայնությունը կազմել է 12 ամիս, ընդ որում մինչև 22.10.2013թ. առանց վարկի գումարի մարման: Պայմանագրի 1.4 կետի համաձայն վարկը (օվերդրաֆտը) տրամադրվում է ընթացիկ վճարումների համար:

Միաժամանակ բողոքաբեր կազմակերպության կողմից ներկայացվել է «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից 21.03.2013թ. տրված N 231 գրությունը, որով «Յունիբանկ» ՓԲԸ-ն հայտնել և հավաստել է, որ «Յունիբանկ» ՓԲԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի միջև 25.01.2013թ. կնքված թիվ 004-038/ԲՕ վարկային պայմանագրով տրամադրված 7.500.000 ՀՀ դրամ գումարի օվերդրաֆտը համարվում է վարկային գիծ:

Այսինքն, «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով N 2.3 հավելվածով ներկայացված պայմանագիրը հանդիսանում է վարկային գծի պայմանագիր և համապատասխանում է Կարգի 83-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին: Գտնում ենք, որ Հանձնաժողովը՝ նկատի ունենալով, որ ներկայացված վարկային պայմանագիրը չի համապատասխանում Կարգի 83-րդ կետով սահմանված պահանջներին և արձանագրելով, որ բացակայում է ընկերության ֆինանսական միջոցները հիմնավորող փաստաթուղթը, խախտել է Կարգի 75-րդ կետի 1-ին ենթակետով և 83-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն հիմնավորմանը, որ գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերով չեն ամբողջացվել նախկինում կատարած պայմանագրերի և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների

փաստաթղթերի փաթեթը, անհիմն է, քանի որ արձանագրված անհամապատասխանությունները Կարգի 75-րդ կետին համապատասխան շտկվելուց հետո Պատվիրատուի կողմից բողոքաբեր ընկերությանն ուղղարկված էլեկտրոնային ծանուցման մեջ որպես անհամապատասխանություն նշված է միայն ֆինանսական միջոցների մասին հայտարարությանը կցվող փաստաթղթերի՝ տվյալ դեպքում վարկային գծի տրամադրման մասին բանկի հետ կնքված պայմանագրի, բացակայությունը, իսկ նախկինում կատարած պայմանագրերի և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների փաստաթղթերի փաթեթն ամբողջացված չլինելու մասին ծանուցման մեջ որևէ հիշատակում առկա չէ: Բացի այդ, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված նախկինում կատարած պայմանագրերի և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների փաստաթղթերի փաթեթում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ:

Պատվիրատուն Կենտրոնին հայտնել է, որ հետագայում ՀՀ քաղաքաշինության նախարարի 27.03.2013թ. N 95 հրամանով կասեցվել են «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով հայտարարված գնման գործընթացի «բավարար» գնահատված բոլոր մասնակիցների ներառյալ «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հրավերով պահանջվող քաղաքաշինական բնագավառի շինարարություն իրականացնող լիցենզիաները և հիմք ընդունելով լիցենզիաների կասեցման փաստը՝ «բավարար» գնահատված մասնակիցներից ոչ մեկի հետ հնարավոր չէ կնքել պետական գնման պայմանագիր:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, ՀՀ Արագածոտնի մարզի գ. Մաստարայի միջն. դպրոցի երկրորդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների գնման նպատակով հայտարարված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից ներկայացված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքում ընկած հիմնավորումները վերաբերելի չեն ներկայացված բողոքի առարկային, հետևաբար ենթակա չեն քննարկման:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից 25.03.2013թ. ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ-ի և «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամ՝ Ռուդիկ Օհանյան